ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 29.06.2026թ. ԹԻՎ 606-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ 10.07.2026թ.
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:00

**Հանձնաժողովի նախագահ**
Է. Խաչատրյան ՕԵԿ ԿԿԾ պետ
**Հանձնաժողովի գնահատող անդամներ**
Ա. Դեմիրճյան ԻԿՀ բաժնի թռիչքների անվտանգության առաջատար մասնագետ
Ս. Դանիելյան «Երևան» ՕԵԿ կենտրոնի պետ
**Հանձնաժողովի բացող անդամներ**
Ա. Կարապետյան ՆԱԴ ծառայության պետ
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Մ. Եսայան ԳՀ բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի անդամ Ա. Պողոսյանը գտնվում էր արձակուրդում և նիստին չմասնակցեց:

**Օրակարգ**

1. ՀԱՆ-ԵՄԾՁԲ-01/26 ծածկագրով նախավորակավորման ընթացակարգին ներկայացված հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2. Նախաորակավորված մասնակիցների ցուցակի հաստատում:
3. Նախաորակավորված մասնակիցներին ուղղարկվող երկու փուլով մրցույթի 1-ին փուլի հրավերի տեքստի հաստատում:

Հրապարակվեցին հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային հասցեները:
1. «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ, info@armeniainsurance.am
2. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ, info@silinsurance.am

Հանձնաժողովը արձանագրեց, որ հայտ էր ներկայացրել նաև «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ, սակայն քանի որ հայտը ներկայացվել էր հայտերի ներկայացման ժամկետի խախտմամբ, հանձնաժողովը որոշեց մերժել «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ հայտը:
Հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցները իրենց փաստաթղթերը ներկայացրել էին էլեկտրոնային եղանակով հրավերով սահմանված ժամկետներում: Առկա էին պահանջված փաստաթղթերը:
Հանձնաժողովի կողմից հայտերի ուսումնասիրման և գնահատման արդյունքում ամրագրվեց, որ երկու մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Քննարկումների արդյունքում՝

**Հանձնաժողովը միաձայն որոշեց**

1. Սույն ընթացակարգին հայտ ներկայացրած երկու մասնակիցների հայտերը գնահատել բավարար:
2. Հաստատել նախաորակավորված մասնակիցների ցուցակը՝

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ

3. Հաստատել նախաորակավորված մասնակիցներին ուղղարկվող երկու փուլով մրցույթի 1-ին փուլի հրավերի տեքստը:

Հանձնաժողովի նախագահ Է. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ Ա. Դեմիրճյան

Հանձնաժողովի անդամ Ս. Դանիելյան

Հանձնաժողովի անդամ Ա. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար Մ. Եսայան